ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2526-Ա « 15 » մայիսի 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ. ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 59 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 84 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Ս. ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 85 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Հ. 136 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի Հ.4046-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 32-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգով, հիմք ընդունելով «Երևանի Հ. Պարոնյանի անվան հ. 59 հիմնական դպրոց», «Երևանի Խ. Աբովյանի անվան հ. 84 հիմնական դպրոց», «Երևանի Ս. Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց», «Երևանի հ. 136 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի՝ 2026 թվականի ապրիլի 27-ի և Հայաստանի Հանրապետության կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2026 թվականի մայիսի 11-ի N 01/09.3/15181-2026 գրություններն ու Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի՝ 2026 թվականի մայիսի 13-ի հ. Ն/30832-26 զեկուցագիրը.

1. Դադարեցնել «Երևանի Հ. Պարոնյանի անվան հ. 59 հիմնական դպրոց», «Երևանի Խ. Աբովյանի անվան հ. 84 հիմնական դպրոց», «Երևանի Ս. Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց», «Երևանի հ. 136 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամ Ալեքսան Արևշատյանի լիազորությունները:

2. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի «Երևանի մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝

խորհուրդների կազմերը հաստատելու, Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 25-ի հ.632-Ա, 2021 թվականի հուլիսի 22-ի հ.հ. 596-Ա, 2597-Ա, 2598-Ա, 2599-Ա, 2600-Ա, 2601-Ա, 2602-Ա, 2603-Ա, 2604-Ա, հ. 2605-Ա, 2606-Ա, 2607-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 4046-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 11-րդ հավելվածի 1-ին կետի 7-րդ սյունակում՝ «Արևշատյան Ալեքսան» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Լուսինե» բառերով.

2) 11-րդ հավելվածի 1-ին կետի 8-րդ սյունակում՝ ««Երևանի Լ. Արիսյանի անվան հ. 127 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչ» բառերը փոխարինել ««Երևանի Մ. Քաջունու անվան հ. 54 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչ» բառերով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետին:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246